20. ՀՈՎՍԵՓ

Կէղնի, չէղնի թագավոր մը կէղնի։ Ըդ թագավորին կէղնի էրՁու հատ տղա։ Թագավոր կըխտիարնա, կըխտիարնա, կհասնի մահու դուռը, օր դի մեռնի, կհանին բերին օր մասնավորին։

Կհանին, կասա.—Ես իմ տղաներ բաժանիմ, օր ես մեռնիմ, բաժնին, կովին մալի վրա, քըրՁին ընՁի։

Մեկ տղին կիտա ուր թագավորութիւն, պղտիկ տղին էլ կասա.—Առ քըզի խուրջինմ՝ օսկի, Ձնա Վերվերի սարը, մաղարե մի կա, ընտեղ ապլորվի։

Հեր կմեռնի, էդ պղտի տղեն խուրջինմ՝ օսկի կառնի, կէրթա Վերվերի սարը մաղարիմ՝ մեջ կապրի։ Կուտին էդ օսկին, կթմըմի։ Օսկին օր կթըմըմի, ամիս մը էդ տղեն, ուր մշակ անոթի կմնան։ Է՞հ, անոթի մարդուն քուն չկա։ Գշեր կմտածեն, գշեր կես կէղնի, ճետ կկանչա.—Կիկլիլիլի, հավկիթ մը ածեր եմ, տարեք ծախեցեք, կերեք։

Թագավորի մշակ ինք ուրին կասա.—Թե օր ես էրթամ վերնում զհավկիթն բերիմ, պըտի իմ աղեն ըսա, թե էդ ինչ լորիկ հ՝էրես մարդմ՝ ա, շուտ մա շուտ ուր անոթութին խալդին կասա։

Թագավորի տղեն լէ կմտածա, կասա.—Թե օր ես շուտ հ՝էլնիմ էրթամ բերիմ զհավկիթ, պտի մշակ ըսա, թե իմ աղեն մախուլ մարդու տըղա ա, օր անոթութին շուտ մը մարդու կրացա։

Եղնա մշակ կէլնի կէրթա կբերա ղհավկիթ, օր կբերա, կառնի կէրթա քաղաք։ Էդ Հովսեփ կասա մշկուն.—Շուտ տար քաղաք, ծախա, տուր առ կերակուր, արի ուտինք, անոթի մեռանք։

Մշակ կառնի կէրթա քաղաք, չարսուի գլուխ շահուդ մը կայնուկ ա։ Յահուդին մշկին կասա.—Էդ հավկիթ չծա՞խես։

Թագավորի մշակ կասա.—Կծախիմ,—կասա,—ի՞նչ կիտաս։

Յահուդին կասա.—Կիտամ քզի վեց օսկի։

Թագավորի մշակ կասա.—Քուփակ, ի՞նչ ա կղրուցիս,—դինա թե տնաղ կէնա, հավկիթ շատ աժենա։ քսան փարա։

Մշակ կքելա։ Մշակ օր կքելա, յահուդին կվաղի հրմլա հ՝առեշ կառնի։ Շուտ կհանա քիսեն, տասը օսկի կիտա։ Կիտա, ղհավկիթ կառնի։ Յահուդին դինա օր մշակ տի փոշմընի, կառնի ղհավկիթ դեն կփախնի, մշակ լէ կմտածի, թե յահուդին տի փոշմընի, կառնի փարեն ու կփախնի։ Կէրթա կառնի կերակուր, կտանի թաղավորի տղին։ Հարի էն տաս օսկու կերակուր կուտին, կթըմբմին, ճետ մեկ լէ կածա։ Թագավորի մշակ էմլա կմտածա, կասա, թե.—Ես շուտ էրթամ, վերում, պըտի իմ աղեն ասա՝ տես, տաս օսկու կերակուր հլա հ՝իրկուն ա թըմբմե, ինչ անամոթ է ուր հ՝էրես, լորկի հէրես է, չամչընա, հ՝իրկուն էր տաս օսկու կերակուր կերանք։

Թագավորի տղեն լէ կմտածե, կէլի ճետու հավկիթ կվերու, կիտա մշկին, օր տանի քաղաք ծախա, բերա կերակուր։

Մշակ կէրթա քաղաք, կտեսնա յահուդին էմլա կայներ ա, ճամբաս կպահա։ Յահուդին էմլա կասա.—Մշա՛կ, էդ հավկիթ չծա՞խիս։

Մշակ կմտածա, կասա.—Թե օր ասիմ կծախիմ, պտի ճանչնաղիս՝ ուր փարեն ուղե, կքելա։

Յահուդին կասա.—Ախպե՛ր, էդ հավկիթ մի տանի մըշ քաղքին, ղգին ըսե, ես կառնիմ։

Մշակ կասա.—Չեմ ծախի, տանիմ քաղաք, կիտամ փարայի, թաղավորի տղի համար կերակուր կառնիմ կտանիմ։

Յահուդին կասա.—Կիտամ քզի քսան օսկի, կառնիմ։

Կասա.—Քուփա՛կ, վրես կծիծղա՞ս,—էն ինչ դինա, օր հավկիթ մը կարժենա քսան օսկի։ Կէլնի կքիլա։ Քիլա, Յահուդին կվաղի հ՝առեշ, քսան օսկին կիտա ինե, կառնե ղհավկիթ ու կփախնի, չէղնի մշակ փոշմընի, առնի ղհավկիթ։ Մշակ լէ կառնե ղփարեն ու կկորի մըշ քաղքին, օր յահուդին չփոշմնի, գա ղփարեն ուղա։

Իդհախս կառնե քսան օսկու կերակուր, կէրթա։ Քսան օր կապրին էն կերակուրով։

Թագավորի տղեն կասա մշկուն, թե օր իդա ճետ ուր ածեն կտրավ, մենք իմա՞լ ապրինք։

Էտ ճետ ածեն կկտրի։ Էրկու իրեք օր անոթի կմնան, մշակ ուր մտաց մեջ կասա.—Էլեմ աղիս ըսեմ, թե իդա ճետ ըի մորթինք, տարմվան մը կերակուր կէղնի, իմ աղեն տի քրվա ընձի, տի ասա. «Իդա խտար փարա կերանք, իդա մեկ ճետն ա մացեր ա, գիշեր կկանչա, կիմնանք, թե ինչ դախ էղավ»։

Աղեն լէ ուր մտքի մեջ կասա. «Ըս մշակ անոթի չկրնա մնա, հ'էլինք ղճետ բերինք մորթինք»։

Հ'էլան ճետ բերեցին, մորթեցին։ Օր ճետ մորթեցին, ճիտու փոր պատռեցին, հ'էլավ ըդրա փորու մեջ մատնիք մը։ Մատնիքն օր տղեն հ'ըցկեցուց մատ, շփեց, իրեք փերի կանան ուր հ'առեջ։

Ըսեցին.—Տղա՛, ուղա օր քու խնդիրք կատարինք։

Տղեն կասա.—Էլ ի՞նչ ուղիմ ձեղնե, մեկ ավայի մը կուզիմ օր իմ պապու քոշկ ու սարին խորոտ էղնի։

Ըդոնք քնին կէլնին, լուսուն կտեսնին, օր էդ խարաբա տեղ էղեր ա խորոտիկ ավայի մը։

Տղեն նորեն կշփա մատնիք, իրեք փերին կկանին հ'առեջ, կասա.—Մեկ կնիկ մը բերեք մըզի հաց էփող։

Ըդոնք կէրթան, կառնին պառավ մը, կիգան։ Պառավ կիգա հ'ոդի, տղեն կէլնի կէրթա սար՝ նեճիր։ Կէրթա սար, կտեսնա զթագավորի տղեն հ'իրկուն կիգա տուն, կիգա տուն, պառվուն կասա.—Առտուն պըտի էրթաս թագավորի ախչիկ ուղիս ընձի։

Մատնիք կշփա, իրեք փերին կկանին հ'առեջ։ Ըդ փերիներուն կասա.—Ձեռ մի խաս շոր կբերեք՝ պառավ հագնի, կվերցուք, կտանիք թագավորի քոշկ ու սարի հ'առեջ կդնիք։

Փերիներ ձեռ մը շոր կբերին, պառվուն կհագցնին, կառնին կէրթան թագավորի քոշկ ու սարի հ'առեջ կդնին։

Պառավն ա կասա.—Խնամաթո՛ռ, խնամաթո՛ռ,—կէլնի քոշկ ու սարեն, թագավորի մոտ։

Թագավոր կասա.—Իմ լէ մեկ տղա, մեկ ախչիկ է, էրկուս լէ ազապ ին, էդ ո՞րն ա խնամաթոռ, խնամաթոռ կասա կիգա։

Պառավ կասա.—Ես իմ, քու ախչիկ տի տաս իմ տղին։

Կըսա.—Ջանը՛մ, ես թագավոր, դու մե պառավ կնիկ, իմա՞լ էկեր իս իմ ախչիկ կուզես։

Պառավ կասա.—Ինչ օր կուղիս, կիտամ, ախչիկդ տի տաս իմ տղին։

Թագավոր կասա.—Իդա դար հ'իրկվընե լուս թե դուրընցուցիր, աղոթրընին, օր արև առավ իմ քեռշկին, կիտամ ղիմ ախչիկ։

Իմալ մենծ դարմ' էր, օր կես օր կըլներ՝ նոր արկ կառներ ըդրա քոշկ ու սարին։

Պառավ կէլնի կիգա։ Կէլնի կիղա տուն, նիաթ կէնի, կնստի։ Տղեն գացեր նեճրութեն՝ սար։

Հ'իրկուն կիգա տուն, կասա.—Նանե՛, ինչի՞ քու նիաթ էներ իս։

Տղեն դինա օր թագավոր ծանտր բան ա ուղեր ա։

Կասա.—Լաո՛, ես նիաթ չէնիմ, ո՞րն էնի։ Թագավոր օր էն ուղածն օր ուղեր ա, մենք չընք կրնա, պեկ բերի։

Տղեն կասա.—Ի՞նչ ա կուղե թագավոր։

Կասա.—Լաո՛, ուղեր ա, ուր քոշկ ու սարի հ'առեշ մեկ մենճ դար մը կա, օր դուրընցուցինք, արև առավ ուր քոշկ ու սարին, կասա՝ ախչիկս կիտամ։

Կասա.—Նանե, էնի էղնի. ըռհա՛թ ա։

Մտանիք կշփա, փերիք կկանին հ'առեշ։

Կասա.—Ձիղնե կուղեմ հ'իրկըվընե լուս էն դար դուրընցուք, օր արև առնի ուր քոշկ ու սարի վրեն, օր տա ղուր ախչիկ։

Մատնիք կշփա, էլի փերիք կկանին հ'առեջ, կասա.—Նանե, հ'էլի գնա։

Կասա.—Դար դուրընցե՞ր ա օր էրթամ։

Կասա.—Դու գնա՛։

Կէրթա, էմլա կմոտենա թագավորի քոշկ ու սարին, կտեսնա արև զարկեր ա վըր քոշկին։ Էմլա կէղնի ակըրթգախ, պառավ կասա.—Խնամաթո՛ռ, խնամաթո՛ռ,—ու կէլնի թագավորի մոտ։

Թագավոր ուր կնկան կասա.—Վալահի մեր պառավ էկավ։

Թագավոր կասա.—Պառավ, քեզնե կուղիմ քառսուն ճուղ գառ, էդ քառսուն ճուղ գառնին ճակատ սև էղնի, շանդակ սպիտակ էղնի, մեկ լէ կարմիր էղնի, ուր ճակատ սպիտակ բաշ էղնի։ Մեկ լա սև էղնի, կարմիր բաշ ուր ճակատ էղնի, օր ախչիկ իտամ քու տղին։

Պառավ էկավ տղի մոտ։ Նիաթ էնեց։ Տղեն ըսավ.—Նանե, ինչի՞ քու նիաթ էներ ես։

Ըսավ.—Լաո՛, էն բեռն օր թագավոր դրեց մեր վրեն, չենք կռնա վերու։

Շփեց մատնիք, փերիք կանան հ՚առեջ, փերեսներուն ըսավ.—Ձեզնե կուզիմ քառսուն ճուղ գառ, իդմլա-իդմլա նշաններով։

Ըքսի օր ակըրթգախ օր կէղնի, պառավ կէլնի կէրթա թագավորի քոշկ ու սարի հ՚առեջ, կասա.—Խնամաթո՛ռ, խնամաթո՛ռ,—ու կէրթա ներս։

Թագավոր ուր կնկան կըսե.—Վալա՛հի, էն պառավ էլի էկավ։

Պառավ կէլնի վերև, կասա.—Խնամաթո՛ռ, խնամաթո՛ռ։

Թագավոր կասա.—Քեզնե կուզիմ քառսուն դևա բառձուկ, հ՚ըմեն զմրութ ու յաղութ. թանկագին քար էղնի։ Օսկե ճետ հ՚առջի դևու վզին էղնի, արծթե ճետ հ՚ետևի գևու վզին էղնի, օր իմ ախչիկ իտամ քու տղին։

Պառավ հ՚էլավ էկավ տղի մոտ, նիաթ կէնա, կնստի, տղեն կհարցու, կասա.—Նանե, ի՞նչ ըսեց։

Կասա.—Շատ բան ուզեց, մենք չենք կանա տա։

Կըսա.—Ի՞նչ ուզեց, նանե՛։

Կասա.—Ուզեց քառսուն դևա, բառձուկ յաղութ ու զմրուխտ։

Կասա.—Նանե՛, էդ ոըհա՛թ ա։

Կշփա մատնիք, իրեք փերին կկանին հ՚առեջ, կասա.—Ձեզնե կուզիմ քառսուն դևա բառձուկ զմրութ ու յաղութ, օսկի ճետ հ՚առջի դևու վզին, արծթե ճետ՝ հ՚ետի դևու վզին։ Պատրաստեք, լուսուն իգաք ինձի ըսեք։

Լուսուն օր կէզնի, կիգան կըսին.—Պատրաստեր ինք։

Կասա.—Վերցուցե՛ք իմ նան, տարե՛ք դրեք թագավորի քոշկ ու սարի հ՚առեջ։ Տարան դրեցին թագավորի քոշկ ու սարայի հ՚առեջ։

Պառավ էլմա «խնամաթո՛ռ» ըսեց ու հ՚էլավ, էլմա պառավ հ՚էլավ, քուրսին դրեցին, զինք նստուցին. օր կնստի, թագավոր կասա.—Քեզնե կուզիմ իմ ախչկան ձեռք մը շոր, օր նեա՛ ճիտու ձեն հասկցեր ա, նեա մատ լէ առե կարեր ա, գզան խերշոկի մեջ էդի։ Քաղքցոց համար էլ շոր կուղա, անմենքին ուր կորա։

Պառավ կէլնի կիգա։ Պառավ էկավ, տղեն տուն էր։

Ըսեց.—Պառավ, ի՞նչ ըսաց։

Ըսավ.—Հմալ օր էղնի կիտամ զիմ ախչիկ, օր չէղնի, չըմ իտա։

Կշփա մատնիք, իրեք հատ փերի կկայնին հ՚առեշ։

Փերեսներուն կրսա.—Ձեղնե կուզիմ քառսուն հովիվ, քառսուն հատ լէ դևաշի, քառսուն հատ լէ էնպես արար, օր որն տեսնա՝ ահու կտրի, թագավորի ասկըրի մեշ էդմալը չէղնի։ Ձմեն թամամի ըդրանց, տարեք թագավորի քոշկ ու սարայի հ՚առեշ գրեք։

Արև օր կառնի, թագավոր կտեսնա, օր դառներու բըռբըռում, հովիվներու հ՚էլեն ու իրրպեն, շներու հաշալու ձեն, դևեսներու գոռգըռուն, արարներու ձիաներու ղըռղըռուն թագավորի քաղաքն ու քոշկ ու սարեն վերուց ու դրեց։

Պառավ լէ. «խնամաթո՛ռ, խնամաթո՛ռ» ըսելեն կէլնի դեմ թագավորի մոտ, թագավորի ախչկա շորեր կդնա հ՚ոդի, թագավորին կասա.—Քաղաքացոց շորեր լէ հանդ է, ցածրն է դրուկ։

Էդմալ օր կրսե։ Ձախչիկ կիտա, թագավորի քառսուն դևեն ապրըշում կբառնա, շուխա կբառնա, կէլնին կիգան։ Քառսուն հատ լէ վողիր կհ՚ընկցու ուր հ՚ետև թագավոր ու կէրթա։

Տղեն մատնիք կշփա։ Փերիք կկանին հ՚առեշ, կասա.—Քեզնե կուզիմ քառսուն հատ բաքչի, օր ձիաներու գլուխ բռնա։ Քառսուն հատ լէ բերիս, օր մեր արարներու գլուխ բռնա։ Ամեն արարուն լէ քառսուն արծթե թաս բերիս, քառսուն հատ լէ խայլոն, քառսուն հատ լէ խայլոն կրերիս թագավորի մարգերուն։

Էդմալ փերիք էրկու քառսուն մարդ կրերին, օր վեղիրներ կիգին, կհասնին շուտ մը ձիաց գլուխ կբռնին, էնդոնց կպատրաստին, օր խայլոն քաշին։ Խայլոն օր կքաշին, թագավորի տղեն կասա.—Ամեն ուր թաս թող վերու թալա ուր ջեբ։

Իդա թագավոր ղուր վոզիրներ կդարձու, կմնա մեկ էրկու հատ ուր հետ։

Բերին զախչիկ կպսակին վըր աղին։ Օր մը, էրկու օր կմնա, թագավոր տղին կըսե.—Ջըս իգա՞ էրթանք սար նեճրութեն։

Լուսուն օր կէղնի, տղեն մատնիք կհանա օր լվացվի. օր կլվացվի, մատնիք կմոռանա, կմնա փանճարան։ Կէլնին, կէրթան սար նեճրութեն։ Տղեն թամպա կէնա ուր մամուն, թե ես կէրթամ սարն նեճիր, ընձի հաց իգա սարի գլուխ կեսորին։

Կես օր օր կէղնի, թագավորի տղեն կիշկա ուր հացին, կտեսնի չիգա։ Ընդոնք թըղ մնան հ՚ոնի։ Դառնանք յահուդին առնինք իգանք։

Յահուդին օր հավկիթներ առավ, կուզե օր զմատնիկ լէ առնի։ Լցեր ա տոպրակ արծրթե մատնիք ու աշխրքե-աշխարք ման

կուգա, կծախա։ Կծախա, ինչո՞վ լէ կծախա՝ կորեկ ու գըլգըլով։ Օր էդ մատնիք չերևա, կէլնի դուրս էդ կորեկ ու գըլդիլ կթափա, կիգա թագավորի տղի քոշկ ու սարի հ՝առեջ կկանի, կմտնի ներս, կտեսնի հանդ է պառավ ներս նստուկ ա, հ՝էրես կդարձու փանճարեն, օր էդ մատնիք լուսի պես կշողա։ Ուր մատնըքներ կթափա հ՝ոդի, կվերցու զէդ մատնիք, կըցկու ուր մատը։ Կշփա, փերիք կկանին հ՝առեջ։

Կասա փերիսներուն.—Ձեղմե կուղիմ զթագավորի ախչիկ ու իդա քոշկ ու սարեն ու դիս վերցուք տանիք յոթ ծովու կղզին։

Թագավորի տղեն կիշկե օր ուր հաց հ՝անկըցավ, կիշկա մատներու վրեն օր մատնիք չկա մատը, կասա.—Հա՜յ վախ, օ՛յ հա՜յ վախ, գնաց ու կորավ։

Կհեծնին թագավորը, փեսեն ու վեզիր կիգան։ Կիգան ըդ տղի քոշկ ու սարի հ՝առեջ, կտեսնին ըդի բան չկա, նեա՜ քոշկ ու սարա, նեա՜ թագավորի ախչիկ։ Թագավորի տղեն կիշկա օր էն հ՝առջի անգամվան խարապա տեղն է, օր ճետ կածեր, իրենք կտանեին կծախեին։

Թագավոր կասա ուր վեզիրներուն.—Էդ տղին կտանիք Վերվերի սարի մը գլուխ կսպանիք, ուր շորեր կարունոտիք, կբերիք ընձի, օր ես ավտընամ։

Տանին էդ տղեն Վերվերի սարի գլուխ. օր տարան սարի գլուխ, էս տղեն տկլոզցուցին, տկլոզցուցին, տեսան, էն դիհեն թոփալ արջ մը էկավ, զարկեցին էդ արջ սպանեցին, էդոր շորեր տրորեցին արջի արնի մեջ, հ՝ելան էկան տղուն ըսին.—Դու էլ գնա, խեղճ ես, չինք սպանի։

Բերին շորեր թալին թագավորի հ՝առեջ։

Թագավորն ըսեց.—Հ՝էլեք էրթանք, հարկավոր չի, ախչիկմ՝ է՝ հա՜ էղե, հա՜ չէ էղե։

Հ՝էլավ, գնաց ուր տեղ։

Դառնանք իդանք տղին։

Տղեն շատ ու քիչ ճամբախ էկավ, էկավ խեղճ-խեղճ քաղքի մը մեջ մտավ, մտավ էդ քաղքի մեջ, գնաց պառվու մը տուն, պառվուն ըսեց.—Նանե՜, ընձի էսօր չըս թո՞ղի էղնիմ ղոնախ քու տուն։

Կասա.—Լաո՜, ընձի օրդի չկա, դու էղե ընձի օրդի, մացի իմ տուն։

Կմնա հ՝ոդի, օր մը էրկու օր, կէրթա քաղքի մեջ կաշխատի, հինգ տաս ղուրուշ ուր ձեռ կընկնի։ Լուսուն կէրթա քաղաք, կէրթա, կտեսնա մարդու մը ձեռ մուկ մը կա, մարդ կբռռա, կասա.—Էս մուկ կծախիմ, դնող քյար կէնա, ծախող զարար կէնա։

Էդ տղեն ղմուկ կառնի կիգա առուն, կասա.—Նանե՛, վտլա՜հ, մուկ մը գներ իմ, բերեր իմ։

Մամ կասա.—Լաս՛, ինչի՞ հինգ ղուռուշ տվեցիր, իդա մուկ բերեցիր, կուտա մեր հացեր։

Մուկ օրեն օսկի մը կրերա կգնա տղի չոքերու վրեն։ Շաբաթ մը էմալ մուկ օրեն օսկի մը կրերա, կգնա տղի չոքի վրեն։

Օր մը կէլնի էմլա կէրթա չարսուն։ Կէրթա օր մարդու մը ձեռ կատու մը կա, կբռռա, կասա.—Իդա կատուն կիտամ հինգ ղուռուշ, ծախող զարար կէնա, գնող քյար կէնա։

Կառնի զէդ կատուն, կիգան։ Կառնի, կիգա մամուն կասա.—Մամե՛, վա՜ղահ, կատում՝ լէ բերեր իմ։

— Ա՜խ, լաո՛,—կասա,—թալ ղէդ կատուն, օրեն էն մուկ մեկ օսկի կբերա, էդ կատուն կխեղդա զէդ մուկ, օրեն օսկի մը կէլնա մեր ձեռքեն։

Կասա.—Մամե՛, աստված իմալ օր էնե, թող էնե, հոգըրցու հետ իրերաց։

Մուկ կէրթա օրեն օսկի մը կրերա, կատուն կէրթա օրեն բոխչե մը շոր կբերա։

Շաբաթ մը էրկու էդոնք կկրին ու կբերին։ Կբերին, օր մը էդ տղեն էմլա կէլնի կէրթա չարսուն, կէրթա օր մարդ մը բոշիմ՝ մը կծախա, կասա.—Էդ բոշին կծախիմ հինգ ղուռուշի, որն օր առնի քյար կէնա, ծախող լէ զարար կէնա,—կիտա հինգ ղուռուշ, կառնի։ Կառնի, կբերա, կասա.—Մամե՛, վալլա՜հ, բոճի լէ բերեր իմ։

Կասա.—Լաո՛, տար ըդ բոշին թալ։ Կխեղդա զկատուն, կատուն կիսխեղդ կփախնի, կիգա կխեղդա զմուկ, հա՛մ կէրթա մեր բոխչա շորեր, հա՛մ լէ մեր օսկի փարեն։

Կըսա.—Նանե՛, իմալ օր մուկն ու կատուն սովրան իրար, բոշին ու կատուն լէ թող սովրին իրար։

Մուկ օրեն օսկի մը կբերա, կատուն ու բոշին օրեն բոխչե մը շոր անմենքը կբերին։ Շաբաթ մը կբերին, էդրա տան մեկ դհեն կլնան, կէլնի հ՝առիք։ Կատուն, բոճին ու մուկ հ՝իրարու հետ կխոսան։

Բոճին կասա.—Կատու ախպեր ու մուկ ախպեր, մենք ինչ զտար օր ապրանք բերինք մեր տիրու նիաթ տեղն ա, քեֆ ուրախութեն չէնա,—կասա,—էկեք մեր տիրուց հարցնենք հ'ո՞րի ուր նիաթ տեղն ա, չծիծաղա։

Կըսա.—Էդի փարի կարոտով չէ, ջորի կարոտով չէ, ինք ոչ պարտքնտեր է, ոչ կբանի կնեղենա, հ'որի չպտի խնդա, ուրախանա։

Բոջին, կատուն ու մուկը կմտնին ներս, տիրուն կըսին.—Մենք իդա զդար բան կրերինք, դու նեա՛ կծիծղաս, նեա՛ ուրախութին կէնիս, մենք էլ չենք էրթա բերի։ Քու սրտի փափաք մեզի ըսա, օր մենք քու սրտի փափաքին աշխատինք։

Կասա.—Իմ սրտի փափաք կռնա՞ք բերիք։

Կասեն.—Հա, դու ասա, մենք կբերինք։

Կասա.—Իմ սրտի փափաք էնա օր էրթաք յոթ ծովու կղզին, էնտեղ յահուդի մը կա, էրթաք իմ մատնիք առնեք բերեք։

Կէրթան կատուն, բոջին ու մուկ ծովու ղրաղ կկանին, թուլեն կթալի ծով, կատուն կէլի կնստի ընդրա պառեկին, մուկ լէ կէլի կնստի կատվի պառեկին, կէրթան։ Կէրթան ընտեղ, բոջին կկանի ընտեղ, կատուն ու մուկ կմտնին ներս, դրա ճրագ կվառի։ Կատուն ու մուկ կտեսնին օր յահուդին վերուց մատնիք մտուց ուր պինչ, բուռնութու ղութին լէ դրեց ուր բարձի տակ։ Կատուն կշռա մկան պոչին, մտուն բուռնութու ղութու մեջ, բուռնութուրիկ մկան պոչ մտուն յահուդու պինչ, յահուդին կփռնչտա, մատնիք ըդրա պընչեն կէլնի, պատի դետին։ Շուտ մուկ կվերցու, փախին դուրս, կիգան ծովու պռուկ կկանին։

Շուն կասա.—Իլահի, մատնիք կիտաք իմ մոտ, օր ձգի հ'ընցում, թե չէ՝ չեմ հ'ընցու։

Կատուն կասա.—Ախպե՛ր Վընգո, քու բերան ճոռ ա, քու նեֆս թուլ ա, տանք քու բերան, ձկներ հ'էլին խաղան, բերան թալիս ձկներուն, մատնիք պատի ծովու տակ, մեր ամակ էրթա մեր քսեն։ Թող մնա մկան մոտ, մկան բերան խփնուկ ա։

Վնգոն ռազի չէղնի, մատնիք կիտան Վնկո մոտ, կատուն կէլնի կնստի վըր Վնգոյի պառեկին, մուկ կէլնի կնստի վըր կատվի էրկու անկըջի, օր էգնա հ'էլնի դուրս, ձուկ մը կխաղա, կիգա ըդրա քթի հ'առեջ։ Վնգոն օր բերան կթալա, մատնիք կպատի, ձուկ կլու։ Թոռչիկ ըտեղ թոռ կթալին, կէլնին էգ իրեք ծովու պռուկ, շուն

9—276

կհաչա, կատուն կնըվնըվա, մուկ կճըվճըվա, կօլորտին իրեքն ծովու պռունկ, կիգան ու կէրթան։

Կատուն կասա.—Ախպեր Վնգռ, ես էն գախ ասի, քու բերան ճոռ ա, քու նրֆս թուլ ա, ձկներ կխաղան, կէլնին քու հ՚առեշ, կրխաղան, բերան կթալիս, ձուկ կլու, էս մեր ամակ գնաց մեր քսեն, մենք ի՞մալ էրթանք մեր տիրու ջուհապ իտանք։

Ըդոնք կնըվնըվան, կէրթան ու կիգան, թոռչիք ձուկ կթալին, էդոնք չրն ուտի։

Հ՚ետին ավալ օր թոռ կթալին, աստծու հրամանքով էդ ձուկ կէլնի թոռ, կիշկին օր մատնիք էդ ձկան փոր կլողա, կթալին էդոնց, կատուն ու շուն կվերցուն։ Իրեքանց կառնին կիգան, ձուկ կբերին, դնին տիրոջ չոքին վրեն։ Տեր կպատռա, մատնիք կհանա փորեն, կշփա մատնիք, էլմա աստծու հրամանքով փերիք կկանին ուրան հ՚առեշ, կասին տղին.—Դե՛ ուզա։

Կասա.—Ձեր վիզ կոտրի, էլ ի՞նչ ուզիմ,—կասա,—ձեզնե կուզիմ էրթաք գթագավորի ախչիկն ու յահուդին առնեք իգաք։

Կէրթան ղյահուդին ու ղթագավորի ախչիկ կբերին, հ՚առեշ կկանգըցուն։

Կշփա մատնիք, փերիք կկանին հ՚առեշ։ Կասա.—Ձեզնեն կուզիմ հ՚ավալքի քոշկ ու սարեն կանգըցուք։

Ջավալքի քոշկ ու սարեն կկանգըցուն։ Կշփա մատնիք, ջուխտ մը արար կուգա։

Արաբներուն կասա.—Իդա յահուդին կկապեք իսա ձիանու պոչ, կտանիք քարոց-քար կզարկիք, պալոց-պալ կզարկիք։ Հ՚իրկուն էղավ, ձիաներու պոչ կլվաք, կբերիք տուն։

Ընդոնք հասան իրանց մուրազին, դու լէ հասնիս քու մուրազին։

Իրեք խնձոր հ՚էրկնուց կիջնի, մեկը՝ ըսողին, մեկը՝ լսողին, մեկ լէ՝ ալամ աշխըրքին։